

ՓԱՐՄԱՍԱՆՔԸ ՄԵՂԵ

«Ինչո՞ւ կը դատես եղբայրդ, կամ ինչո՞ւ զայն կ'արհամարհես» (Հռոմ. 14.10):

Արդ դուն, որ մեղքերով դատուած եւ դատապարտուած ես, չե՞ս սուկար եւ չե՞ս դողար ուրիշներու դատաստանը կատարելէ, որովհետեւ մարդ մը չէ, որ դուն կ'արհամարհես եւ կ'անարգես, այլ՝ Աստուած եւ իր պատիւն ու հեղինակութիւնը յափշտակելէ ետք իր դատը կը տեսնես առանց յիշելու Սուրբ Աւետարանի խօսքը, որ կ'ըսէ. «Մի դատէք ուրիշները, որպէսզի Աստուած ձեզ չդատէ, որովհետեւ ինչ սկզբունքով, որ ուրիշները կը դատէք, Աստուած անով պիտի դատէ ձեզ» (Մատթ. 7.1): Դատելը սուրբերուն կը պատկանի, իսկ յանդիմանելը՝ անբարեկամներուն եւ ասիկա պէտք է ըլլայ առանձնապէս ու աղերսանքով: Ռեւէ մէկը իր մեղքերուն համար հրապարակաւ պէտք չէ յանդիմանել կամ գաղտնօրէն ուրիշներուն ականջին պէտք չէ բամբասել: Կան նաեւ սարսափելի մեղքեր եւ անօրէնութիւններ: Ան, որ մարմնական պակասութիւն մը ունի եւ ուրիշները պակասութեամբ կը նախատէ, արդարեւ ուրիշներէ առաջ ինքզինքն նախատած կ'ըլլայ: «Կեղծատր, նախ աչքիդ մէջէն գերանը հանէ, որ կարենաս յստակ տեսնել եւ ապա միայն եղբորդ աչքին շիւղը հանէ»: Մատթ. 7.5: (ՃԱՌԵՐ Յ. Մանդակունի)

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ




Ձինուորեալ եկեղեցոյ զաւակները մենք ենք, բոլոր անոնք, որոնք արդարօրէն կ'իմաստաւորեն Աստուծոյ կողմէ պարգեւ տրուած իրենց կեանքին օրերը, որոնք այսօր կ'ապրին հաւատքով, կը գործեն հաւատքով եւ իրենց կեանքով կը հաստատեն նուիրական այն պատկանելիութիւնը, որ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին է:

Եկեղեցին կը շնչաւորուի իր գինուորեալ հաւատացեալներով եւ միանգամայն կը շնչաւորէ մեզ մեր քրիստոնէական կեանքին մէջ, սնուցանելով մեր հոգեկան ներաշխարհը անտարանական սրբազան աւիշով եւ մեզ անքակտելիօրէն աղերսուած պահելով Յաղթական եկեղեցոյ հետ:

Իսկ որո՞նք են Յաղթական եկեղեցոյ զաւակները: Բոլոր անոնք, որոնք հաւատքով ննջած են յախտեան, անոնք՝ որոնք իրենց հաւատքի վկայութիւնը տուած են ապրուած կեանքով, եւ այսօր ...

Շարունակելի



ԲՈՒ ԽՕՍԵՂ ԽՄ ՌՅԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ԶԱԽԴՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս. 119.105)

ԺԵ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 6 ՆՈՅՄԲԵՐ 2022

ԹԻՒ 45

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

Ես. 24.1-13: Եփ. 5.15-33: Ղկ. 8.49-57

ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ԳՈՒԿԱՍՈՒ 8.49-57

Մինչ Յիսուս կը խօսէր, ժողովրդապետին տունէն մէկը եկաւ եւ ըսաւ. «Աղջիկդ մեռաւ, այլեւ՝ մի՛ յոգնեցներ վարդապետը»:

Յիսուս ասիկա լսելով, ըսաւ ժողովրդապետին. «Մի՛ վախճար, միայն հաւատա՛ եւ աղջիկդ պիտի ապրի»:

Երբ Յիսուս ժողովրդապետին տունը հասաւ, չձգեց որ ռեւէ մէկը ներս մտնէ՝ բացի Պետրոսէն, Յակոբոսէն, Յովհաննէսէն եւ աղջկան հօրմէն ու մօրմէն: Ներս գտնուողները, բոլորն ալ կու լային ու կ'ողբային: Յիսուս ըսաւ անոնց. «Մի՛ լսք. աղջիկը մեռած չէ, այլ՝ կը քնանայ»: Անոնք զինք կը ծաղրէին, որովհետեւ զի տէին՝ որ աղջիկը մեռած է: Յիսուս բոլորն ալ դուրս հանեց, բռնեց աղջկան ձեռքէն եւ բարձրաձայն ըսաւ. «Ո՛վ փոքրիկ, ոտքի ե՛լ»: Անմիջապէս անոր հոգին վերադարձաւ եւ ոտքի կանգնեցաւ: Ապա Յիսուս հրամայեց, որ ուտելիք տան աղջկան:

ՄԻ՛ ՎԱԽՆԱՐ, ՄԻՍՅՆ ՀԱԻԱՏԱ՛

Քրիստոսի այս փառաբանական խօսքը հասկնալի եւ կիրարկելի կը դառնայ այն իսկական քրիստոնեայ անհատին, որ իր քրիստոնէական կոչումը կ'ապրի գործով եւ ոչ թէ՛ խօսքով: Սաղմոսերգուն փորձառաբար կը վկայէ ըսելով. «Տէրն է լոյսս եւ փրկութիւնս, ես որմէ՞ պիտի վախնամ: Տէ՛րն է կեանքիս ապաւենը, որմէ՞ պիտի դողամ»: (Սղմ. 26.1): Հետեւաբար սիրելի ընթերցող, դժուարութեան մէջ ես: Մի՛ մտածեր, դիմէ՛ անմիջապէս Աստուծոյ եւ վստահ գիտցի՛ր, որ Տէրը անպայման պիտի լուծէ հարցդ եւ ֆեզմէ պիտի հեռացնէ թշնամին: ՄԻ՛ ՎԱԽՆԱՐ, ԱՅԼ ՄԻՍՅՆ ՈՒ ՄԻՍՅՆ ՀԱԻԱՏԱ՛ ՈՒ ԱՊԱԻՆԻՒՐ ԱՍՏՈՒԾՈՅ:

ԳԱՐԻԷԼ ԵՒ ՄԻՔԱՅԷԼ
ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԵՐԸ



Հրեշտակապետեր՝ Գարբիելի եւ Մի-
ֆայելի տօնը ըստ մեր եկեղեցւոյ տօնա-
ցոյցին կը գուգադիպի Շաբաթ, 8 Նոյեմ-
բերին: Եկե՛ք միասնաբար ծանօթանանք
նախ հրեշտակ բառի իմաստին եւ ապա
հրեշտակապետերու:

Հրեշտակ բառը կը թարգմանուի պատ-
գամաւոր կամ դեսպան: Հրեշտակները
սահմանուած են սպասաւորելու հոգինե-
րու փրկութեան այն մարդոց, որոնք պի-
տի ժառանգեն երկինքի արքայութիւնը:

Թէեւ Աստուծոյ առջեւ ծառայակից
ենք հրեշտակներուն հետ, սակայն մեծ է
տարբերութիւնը մարդոց եւ անոնց մի-
ջեւ:

Ինչպէս սուրբերուն միջեւ կան աւելի
վաստակաւորներ նոյնպէս եւ հրեշտակ-
ներու դասերուն մէջ: Անոնցմէ ոմանք
ծանօթ են մեզի իրենց անունով եւ կը
տօնախմբենք իրենց յիշատակը:

ԳԱՐԻԷԼ հրեշտակը, որ կը թարգ-
մանուի այր Աստուծոյ, երկինքի բոլոր
գուարթուններէն աւելի ծանօթ է մարդ-
կային ցեղին:

Ան յանախ պատգամաւորութեամբ
հանդէս կու գայ հին՝ թէ նոր կտակա-
րաններուն մէջ, որպէս գործակալ կամ
դեսպան երկնաւոր փեսային:

ՄԻՔԱՅԷԼ հրեշտակը, ներկայաց-
ւած է որպէս երկնային գօրավար եւ
միանգամայն, վերակացու ու պաշտպան
Աստուծոյ եկեղեցիին:

Երբ Մեծն Կոստանդիանոս իր դարձէն
ետք բազմաթիւ եկեղեցիներ շինել տուաւ,
ասոնց շարքին հռչակաւոր եղաւ Ս. Մի-
ֆայել հրեշտակապետի տաճարը: Ըստ
աւանդութեան, բարեպաշտ կայսրը Սոս-
թենիոնի մէջ գտաւ արձան մը, որ կը
ներկայացներ արծիւի թեւերով այր մը:
Երբ կայսրը հարցուց, թէ որո՞ւ արձանն
էր ան, Միֆայել հրեշտակապետը անոր
երեւցաւ եւ ըսաւ, որ հոն տաճար մը
կանգնէ, որպէսզի հաւատացեալներուն
համար ուխտատեղի մը ըլլայ եւ այդտեղ
երկնային բարեխօսութիւն գտնեն իրենց
հոգեւոր եւ մարմնաւոր կարիքներուն
համար:

Յայսմաւորքները կը գրեն, թէ երբ
առաջին անգամ պատարագ պիտի մա-
տուցուէր Ս. Միֆայելի անունով կա-
ռուցուած եկեղեցիին մէջ, ի ծնէ խուլ եւ
համր պատանի մը կանխեց սարկաւազը
եւ բարձրաձայն ըսաւ. «Պոսիտումէ», որ
կը նշանակէ գգոյշ եղէ՛ք: Եւ ապա սուրբ
հայրապետը ըսաւ. «Ի սրբութիւն սրբոց»:

Ներսէս Շնորհալի իր եղբօր՝ Գրի-
գորիս կաթողիկոսի խնդրանքով, 100
տուն ոտանաւոր գրեց՝ նուիրուած
պանծալի հրեշտակներուն:

Հ ՈԳԵՒՈՐ
ՊԱՏ ԳԱՍ

ԵՐԿՐԱՎՈՐ ԲԺԻՇԿՆԵՐ ԵՒ
ԵՐԿՆԱՎՈՐ ԲԺԻՇԿԸ

Երկրաւոր բժիշկներ հիւանդ մը
քննելով կ'ըսեն. «Երկու ամսուայ
կեանք ունի», կամ՝ «մէկ տարուայ
կեանք ունի», եւլն: Իսկ Յիսուս զայն
քննելով կ'ըսէ. «Յաւիտենական կեանք
ունի»: Երկրաւոր բժիշկներ երբ սիրտի
գործողութիւն պիտի ընեն, հիւանդին
ծնողներուն թուղթ ստորագրել կու
տան, ցոյց տալու համար, որ գործո-
ղութիւնը իրենց հաւանութեամբ է, որ
կ'ըլլայ եւ եթէ գործողութիւնը չյաջողի՝
իրենք (բժիշկները) պատասխանատու
չեն: Իսկ մեր Փրկիչը, երբ սիրտի գոր-
ծողութիւն պիտի կատարէ Սուրբ
Հոգիին միջոցաւ, ինք անձնապէս
գործողութեան թուղթը կը ստորագրէ՝
գործողութեան յաջողութիւնը երաշ-
խաւորելու համար:

ՄԵՐ ՍՈՐՎԵԼ ԻՔ
Հ ՈԳԵՒՈՐ ԴԱՍԸ

Միբելի ընթերցող, երկրաւոր
բժիշկներ կրնան վրիպիլ եւ կեանքը
վտանգի տակ առնել, բայց մեր
երկնաւոր Բժիշկը՝ իր կեանքը վտանգի
ենթարկեց, առանց երբեք վրիպելու:
Վստահէ Յիսուսի: Ան կը սիրէ քեզ: Ան
կ'ուզէ եւ կրնայ բուժել քեզ, միայն թէ
արտօնութիւնը ծնողներդ չէ, որ պիտի
տան, այլ՝ դուն:

ԵԹԷ ԻՆՔՉԻՆՔԻ ԱՍՏՈՒԾՈՅ Կ'ՈՒԶԵՍ
ՅԱՆԶՆԵԼ, կարդա՛ր ՍԱՂՄՈՍ 43

Արդարութիւն ըրէ ինձի, ո՛վ Աս-
տուած, անհաւատ մարդոց դէմ իրա-
ւունքս պաշտպանէ՛ եւ փրկէ՛ զիս
նենգաւոր ու անիրաւ մարդոցմէ:
Դուն եւ նեցուկս, ո՛վ Աստուած,
ինչո՞ւ համար զիս կ'անտեսես,
ինչո՞ւ համար տրտում ըլլամ, երբ
թշնամին կը նեղէ զիս: Քու լոյսդ եւ
ճշմարտութիւնդ որկէ, որպէսզի զիս
առաջնորդեն եւ բերեն քու սուրբ
լեռդ, տաճարդ՝ ուր կը բնակիս: Հոն՝
սեղանիդ քով պիտի գամ, ո՛վ
Աստուած, դուն՝ իմ ուրախութիւնս եւ
ցնձութիւնս, եւ քնարով պիտի
գովերգեմ քեզ, ո՛վ Աստուած, իմ
Աստուածս: Հետեաբար ինչո՞ւ
տխրիմ, եւ կամ ինչո՞ւ խռովիմ,
Աստուծոյ պիտի յուսամ եւ վերստին
գովերգեմ զայն, ըսելով. - «Փրկիչս ես
դուն, իմ Աստուածս ես»:

ԱՍՏՈՒԾԱՇԱՇՈՒՆԶԸ

Երբ բանաս սուրբ Աւետարանը
ընթերցելու համար յիշէ, որ ան է որ
պիտի որոշէ քու յաւիտենական վի-
ճակդ: Անով է, որ պիտի դատուիս:
Այստեղ անոր նկատմամբ մեր ու-
նեցած վերաբերմունքին համեմատ
պիտի հատուցուի մեզի կամ յա-
ւիտենական երանութիւն, եւ կամ
յաւիտենական պատիժ:

(Իգնատի Բրեանչանիւով):